

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ
19.06.2014թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 անդամներից ներկա էին 47-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ամբիոնների վարիչների ընտրություններ:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

Տնտեսագիտության, անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների ծրագրերի հակիրճ ներկայացում:

Հաղ.՝ տ.գ.թ., դոցենտ Թ. Սիմոնյան, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Հովհաննիսյան,
մ.գ.թ., պրոֆեսոր Բ. Սերոբյան, բ.գ.թ., դոցենտ Մարիետա Խաչատրյան

2. Դոցենտի գիտական կոչում շնորհելու հարց:

- Կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս Արտուշ Պապոյան:
- Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, ֆ.գ.թ. Արմենուհի Սարգսյան:
- Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Սամվել Ասատրյան:
- Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Անուշ Խաչատրյան:

Հաղ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

3. ԳՊՄԻ-ում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Միկրոպոլյար, առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների երկրաչափական ոչ գծային

տեսությունը» թեմայի 2013թ. հուլիսի 1-ից 2014թ. հուլիսի 1-ն ընդգրկող ժամանակահատվածի համար ընթացիկ հաշվետվություն:

Ջեկ.՝ թեմայի գիտական ղեկավար, ֆ.գ.դ, պրոֆեսոր,

ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս. Սարգսյան

4. Ինստիտուտի 2014-2015 ուստարվա գործունեության նախապատրաստական աշխատանքների պլանավորում:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան,

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

5. Ինստիտուտի ամբիոնի ասիստենտի պաշտոն զբաղեցնող անձանց /5-ամյա ժամկետը լրացած և աշխատանքային գործունեությունը շարունակող/ կարգավիճակի հստակեցման մասին:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

6. Ընթացիկ հարցեր:

6.1. ԳՊՄԻ-ում կազմակերպվող որակավորման քննությունների (փիլիսոփայություն, անգլերեն և ֆրանսերեն) հանձնաժողովի կազմին վարձատրելու նպատակով յուրաքանչյուր մասնակցի քննաժամանակը սահմանելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով

պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.2. ԳՊՄԻ-ում կազմակերպվող պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ստուգումների հանձնաժողովի կազմին վարձատրելու նպատակով յուրաքանչյուր մասնակցի քննաժամանակը սահմանելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով

պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.3. 2013թ. ԳՊՄԻ-ի ՈւԳԸ-ի կազմակերպած ուսանողական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուն հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով

պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.4. Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխ. գիտ. թեկ., դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի «Ռեկրեացիոն աշխարհագրություն» մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.5. Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, աշխ. գիտ. թեկ., դոցենտ Արմեն Հովհաննեսի Ներսիսյանի «Հայկական սփյուռքի աշխարհագրություն» մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.6. Նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկ. Շողիկ Հրաչի Սարգսյանի «Շարահյուսական գիտելիքների ուսուցման հիմնախնդիրները տարրական դպրոցում» մեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.7. Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ Արտակ Համլետի Հովհաննիսյանի «Հին արևելքի պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյանի հաղորդումը բուհի տնտեսագիտության, անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների վարիչների ընտրության մասին:

Ամբիոնների վարիչների թափուր տեղերի թեկնածուների ցուցակը ներկայացնելուց հետո Վ. Գրիգորյանը խոսքը փոխանցեց բուհի մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանին, ում հաղորդմամբ՝

ա/տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղի համար դիմել է տնտեսագիտության ամբիոնի դասախոս, տ.գ.թ., դոցենտ Թամարա Սիմոնյանը,

բ/ անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, բ.գ.դ., պրոֆեսոր Անահիտ Հովհաննիսյանը,

գ/ ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, մ.գ.թ., պրոֆեսոր Բաբկեն Սերոբյանը:

դ/հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Մարիետա Խաչատրյանը:

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց համապատասխան ձևայնացված կարգավիճակները զբաղեցնելու համար դիմած թեկնածուների ինքնակենսագրությունները, վերջին 5 տարիների ընթացքում նրանց հրատարակած գիտական աշխատանքների թիվը, համապատասխան ֆակուլտետների խորհուրդների որոշումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Կազմակերպել տնտեսագիտության, անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, ֆիզիկական դաստիարակության և նրա

դասավանդման մեթոդիկայի, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների վարիչների ընտրության փակ գաղտնի քվեարկություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը գիտական խորհրդի անդամներին փակ գաղտնի քվեարկության կարգը ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝

1. Մաթևոսյան Ազատ,
2. Սողոյան Սպարտակ,
3. Մելքոնյան Հովիկ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Մաթևոսյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

N	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Սիմոնյան Թամարա	39	7	1
2.	Հովհաննիսյան Անահիտ	42	4	1
3.	Սերոբյան Բաբկեն	45	1	1
4.	Խաչատրյան Մարիետա	43	3	1

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

2. ա/ Տ.գ.թ., դոցենտ Թամարա Սիմոնյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում:

բ/ Բ.գ.դ., պրոֆեսոր Անահիտ Հովհաննիսյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

գ/ Մ.գ.թ., պրոֆեսոր Բաբկեն Սերոբյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

դ/ Բ.գ.թ., դոցենտ Մարիետա Խաչատրյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը: Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Ձևայնացված կարգավիճակը բուհի կառուցվածքում	Մասնագիտություն
1.	Անուշ Ստյոպայի Խաչատրյան	Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ	Կենսաբանություն
2.	Արմենուհի Հակոբի Մարգարյան	Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ	Մեխանիկա

3.	Արտուշ Կարապետի Պապոյան	Կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս	Արվեստագիտություն
4.	Սամվել Միսակի Ասատրյան	Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ	Մանկավարժություն

Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ազատ Մաթևոսյան, Հովիկ Մելքոնյան և Սպարտակ Սողոյան:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Անուշ Սոյոպայի Խաչատրյան	44	3	0
2.	Արմենուհի Հակոբի Սարգսյան	41	5	1
3.	Արտուշ Կարապետի Պապոյան	46	1	0
4.	Սամվել Միսակի Ասատրյան	45	2	0

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ալեքսանյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան, կ.գ.թ., դոցենտ Ա. Գրիգորյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս. Սարգսյանը, կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ. Աթանեսյանը, կերպարվեստի, երաժշտության և նրանց

դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս, պրոֆեսոր Վ. Խաչատրյանը, պրոռեկտոր, մ.գ.դ., դոցենտ Ս. Սողոյանը, մանկավարժության ֆակուլտետի դեկան, մ.գ.դ., դոցենտ Ռ. Մարդոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2.1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2. Վերոնշյալ հավակնորդներին շնորհել դոցենտի գիտական կոչում:

2.3. Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար:

3. ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Միկրոպոլյար, առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների երկրաչափական ոչ գծային տեսությունը» թեմայի 2013թ. հուլիսի 1-ից 2014թ. հուլիսի 1-ն ընդգրկող ժամանակահատվածի համար ընթացիկ հաշվետվություն (**Զեկ.**՝ թեմայի գիտական ղեկավար, ֆ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս. Սարգսյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ֆիզիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Դրմեյանը, ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ Ա. Մանուկյանը, գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոցենտ Ա. Ֆարմանյանը, ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել 13-2c154 պետբյուջեով ֆինանսավորվող «Միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների երկրաչափական ոչ գծային տեսությունը» թեմայի գիտական ղեկավար ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Ս. Սարգսյանի կողմից ներկայացված հաշվետվությունը՝ նշելով, որ 01 հուլիսի 2013 թ-01 հուլիսի 2014թ մեկ տարի ժամանակամիջոցում գիտահետազոտական խմբի կողմից կատարվել են օրացուցային պլանով նախատեսված բոլոր աշխատանքները, հանրապետական նշանակություն և միջազգային ճանաչված գիտական ամսագրերում հրատարակվել են

բազմաթիվ հոդվածներ: Նշված թեմատիկայի և հարակից հարցերի շրջանակում կատարվում են մեկ դոկտորական (Ա. Ֆարմանյան) և չորս թեկնածուական ատենախոսություններ (Ք. Ժամակոչյան-խմբի անդամ, Գ. Հայրապետյան, Ն. Ասլանյան և Մ. Խաչատրյան): Ֆինանսական միջոցները ծախսվել են թեմայի ֆինանսական նախահաշվի դրույթներին համապատասխան:

Հաշվետվությունը թույլատրվում է ներկայացնել ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտե.

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՍԵՑԻՆ.- Ինստիտուտի 2014-2015 ուստարվա գործունեության նախապատրաստական աշխատանքների պլանավորում (Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հանձնարարել ինստիտուտի յուրաքանչյուր ամբիոնի սեփական գործունեության տարեկան պլանի կազմումը մինչև ս.թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ.- Ինստիտուտի ամբիոնի ասիստենտի պաշտոն զբաղեցնող անձանց /5-ամյա ժամկետը լրացած և աշխատանքային գործունեությունը շարունակող/ կարգավիճակի հստակեցման մասին (Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Համաձայն «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգի» /հաստատված՝ 2012թ. մայիսի 26-ին/ 2.3 կետի՝ ներքոհիշյալ անձինք ս.թ. սեպտեմբերի 1-ից դադարում են լինել համապատասխան ամբիոնների ասիստենտներ՝ զբաղեցնելով դասախոսի տարակարգը:

N	Անուն, հայրանուն ազգանուն	Ամբիոն	5-ամյա ընտրաժամկետի լրանալու թվական
1.	Լյուդմիլա Հրաչի Գրիգորյան	Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	01.09.2011
2.	Էմմա Կարապետի Մանուկյան	Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	27.11.2005
3.	Սաշա Կիրակոսի Խաչատրյան	Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	03.03.2013
4.	Սամվել Լևոնի Մաթևոսյան	Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	02.02.2009
5.	Ժան Գուրգենի Հովհաննիսյան	Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	30.10.2008
6.	Աշոտ Մուկուչի Հակոբյան	Հոգեբանության ամբիոն	01.09.2011
7.	Աստղիկ Ռուբիկի Բախալբաշյան	Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	27.12.2011
8.	Արթուր Արամի Նիկողոսյան	Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	01.09.2011
9.	Զավեն Ռուբենի Դանդիլյան	Փիլիսոփայության և հասարակագիտության	01.09.2011
10.	Սիրանուշ Վիլսոնի Խաչկալյան	Փիլիսոփայության և հասարակագիտության	26.03.2012
11.	Էմմա Ռաֆիկի Մուվարյան	Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	01.09.2011

2.Նկատի ունենալով ուսանողական համակազմի տարեցտարի նվազումը՝ ս.թ. սեպտեմբերի 1-ից պրոֆեսորադասախոսական տարբեր տարակարգեր զբաղեցնող ներքոհիշյալ անձանց աշխատանքային պայմանագրերում կատարել ժամկետների փոփոխություն՝ սահմանելով վերջնաժամկետ 2015թ. օգոստոսի 31-ը:

	Ամբիոն	Դասախոսի անուն, հայրանուն, ազգանուն	Տարակարգ
1.	Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	Սերգո Արտուշի Հայրապետյան	դոցենտ
		Վարդան Սենեքերիմի Մելքոնյան	դոցենտ
		Հովիկ Սենեքերիմի Մելքոնյան	դոցենտ
		Հրանուշ Մուրենի Զաքյան	դոցենտ
		Նազելի Աշոտի Ավետիսյան	դոցենտ
		Սուսաննա Հրանտի Զաքարյան	ասիստենտ
2.	Հայ գրականության և նրա դասավանդման	Անահիտ Գևորգի Նահապետյան	դոցենտ
		Անահիտ Ալբերտի Նորիկյան	դասախոս

	մեթոդիկայի ամբիոն	Համլետ Ժորայի Հովհաննիսյան	դասախոս
		Մելինե Գևորգի Հարությունյան	դասախոս
		Լուսինե Սարգսի Պետրոսյան	ասիստենտ
3.	Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	Մելինե Գևորգի Հարությունյան	դասախոս
		Լուսինե Սարգսի Պետրոսյան	ասիստենտ
		Աստղիկ Ռուբիկի Բախալբաշյան	դասախոս
		Արթուր Արամի Նիկողոսյան	դասախոս
4.	Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոն	Ռուզաննա Արամայիսի Մարդոյան	դոցենտ
		Աշխեն Վլադիմիրի Տոնոյան	դասախոս
5.	Հոգեբանության ամբիոն	Հայկանուշ Մանլետի Կնյազյան	դոցենտ
		Աշոտ Մուկուչի Հակոբյան	դասախոս
6.	Նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության ամբիոն	Նունե Հերբերտի Ադամյան	դոցենտ
7.	Կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	Յոլյակ Արտաշեսի Կոչտոյան	դասախոս
		Արտուշ Կարապետի Պապոյան	դասախոս
		Վալերի Գրիգորի Խաչատրյան	պրոֆեսոր
		Աշոտ Միհրանի Միքայելյան	դոցենտ
		Անահիտ Սերգեյի Կիրակոսյան	դոցենտ
		Կարապետ Դավթի Եղոյան	դոցենտ
8.	Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	Լարիսա Արամայիսի Մադենյան	դոցենտ
		Աիդա Ռազմիկի Գարեգինյան	դոցենտ
		Վանուհի Յուրայի Սաֆյան	դոցենտ
		Անժելա Գուրգենի Հովհաննիսյան	դոցենտ
9.	Արտասահմանյան գրականության ամբիոն	Թամարա Հմայակի Մելիքյան	դոցենտ
		Կարինե Թադևոսի Սուքիասյան	դոցենտ
		Սոնա Հարությունի Մովսիսյան	դասախոս
10.	Անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	Անահիտ Սերգեյի Հովհաննիսյան	պրոֆեսոր
		Մարիամ Ազատի Հարությունյան	դոցենտ
		Անժելա Սաշայի Իգիթյան	դասախոս
		Սուսաննա Սուրենի Աբգարյան	դասախոս
11.	Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման	Գայանե Սաշիկի Հարությունյան	դասախոս
12.	Տնտեսագիտության ամբիոն	Յուդաբեր Գևորգի Յափունջյան	դոցենտ
13.	Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման	Անահիտ Ժորայի Ֆարմանյան	դոցենտ
		Ռիմա Գևորգի Բաբաջանյան	դոցենտ
14.	Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	Երվանդ Սերյոժայի Սերոբյան	դոցենտ
		Հրաչիկ Սուրենի Նիկողոսյան	դոցենտ
		Գագիկ Հովհաննեսի Դեմիրճյան	դոցենտ
		Վարդան Ֆրանցի Մանուկյան	ասիստենտ
		Խաչատուր Գուրգենի Սուլթանյան	դոցենտ
		Սուսաննա Պատվականի Խաչատրյան	դասախոս

15. Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	Կարինե Ռահիմի Պետրոսյան	դոցենտ
	Նելլի Վոլոդյայի Ադամյան	դոցենտ
	Գոհար Պերճի Գոլյան	դասախոս
	Գայանե Ռաֆիկի Օքսուզյան	դոցենտ
	Արթուր Արմենակի Ստեփանյան	դոցենտ
	Ստելլա Մերուժանի Թոսունյան	դոցենտ
	Կարինե Աշիկի Գրիգորյան	դասախոս
	Անահիտ Ֆաբրիցուսկու Գրիգորյան	դոցենտ
	Էմմա Ռաֆիկի Սուվարյան	դասախոս
16. Դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	Կարինե Խանանի Ավագյան	դոցենտ
	Օֆելյա Ավետիքի Պապոյան	ասիստենտ
17. Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	Աշոտ Ազատի Գրիգորյան	դասախոս
	Անահիտ Պարզևի Վալեսյան	ասիստենտ
	Աիդա Նարիմանի Համազարյան	ասիստենտ
	Էդուարդ Արամայիսի Ճարտարյան	դոցենտ
	Արտաշես Գևորգի Բոյաջյան	ասիստենտ
	Գայանե Ռուվեսի Ավետիսյան	ասիստենտ
18. Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	Ազատ Վարշամի Մաթևոսյան	պրոֆեսոր
	Վահե Նորիկի Թորոսյան	դասախոս
	Հովհաննես Գևորգի Այվազյան	դասախոս
	Վարդան Ֆաբրիցուսկու Գրիգորյան	պրոֆեսոր
	Արմեն Սամվելի Մարտիրոսյան	ասիստենտ
	Լյուդմիլա Հրաչի Գրիգորյան	դասախոս
	Էմմա Կարապետի Մանուկյան	դասախոս
	Մաշա Կիրակոսի Խաչատրյան	դասախոս
	Սամվել Լևոնի Մաթևոսյան	դասախոս
	Ժան Գուրգենի Հովհաննիսյան	դասախոս
19. Փիլիսոփայության և հասարակագիտության	Զավեն Ռուբենի Դանդիլյան	դասախոս
	Միրանուշ Վիլսոնի Խաչկալյան	դասախոս

3. Հանձնարարել Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանին 2014-2015 ուստարվա ընթացքում կատարել ամբիոնների ծանրաբեռնվածության վերլուծություն և ներկայացնել համապատասխան տարակարգերի մրցութային տեղերի վերաբերյալ հաղորդում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

6.1.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ում կազմակերպվող որակավորման քննությունների (փիլիսոփայություն, անգլերեն և ֆրանսերեն) հանձնաժողովի կազմին վարձատրելու նպատակով յուրաքանչյուր մասնակցի քննաժամանակը

սահմանելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ում կազմակերպվող որակավորման քննությունների (փիլիսոփայություն, անգլերեն և ֆրանսերեն) հանձնաժողովի կազմին վարձատրելու նպատակով յուրաքանչյուր մասնակցի քննաժամանակը սահմանել 4 ժամ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.2.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ում կազմակերպվող պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ստուգումների հանձնաժողովի կազմին վարձատրելու նպատակով յուրաքանչյուր մասնակցի քննաժամանակը սահմանելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ում կազմակերպվող պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ստուգումների հանձնաժողովի կազմին վարձատրելու նպատակով յուրաքանչյուր մասնակցի քննաժամանակը սահմանել 2 ժամ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.3.ԼՍԵՑԻՆ.- 2013թ. ԳՊՄԻ-ի ՈւԳԸ-ի կազմակերպած ուսանողական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուն հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության 2013թ. ԳՊՄԻ-ի ՈւԳԸ-ի կազմակերպած ուսանողական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.4.ԼՍԵՑԻՆ.- Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխ. գիտ. թեկ., դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի «Ռեկրեացիոն աշխարհագրություն» մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխ. գիտ. թեկ., դոցենտ Լևոն Մովսեսի Սարտիրոսյանի «Ռեկրեացիոն աշխարհագրություն» մենագրությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամներ. կողմ` 47, դեմ` 0, ձեռնպահ` 0:

6.5.ԼՍԵՑԻՆ.- Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, աշխ. գիտ. թեկ., դոցենտ Արմեն Հովհաննեսի Ներսիսյանի «Հայկական սփյուռքի աշխարհագրություն» մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, աշխ. գիտ. թեկ., դոցենտ Արմեն Հովհաննեսի Ներսիսյանի «Հայկական սփյուռքի աշխարհագրություն» մենագրությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամներ. կողմ` 47, դեմ` 0, ձեռնպահ` 0:

6.6.ԼՍԵՑԻՆ.- Նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկ. Շողիկ Հրաչի Սարգսյանի «Շարահյուսական գիտելիքների ուսուցման հիմնախնդիրները տարրական դպրոցում» մեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկ. Շողիկ Հրաչի Սարգսյանի «Շարահյուսական գիտելիքների ուսուցման հիմնախնդիրները տարրական դպրոցում» մեթոդական ձեռնարկը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամներ. կողմ` 47, դեմ` 0, ձեռնպահ` 0:

6.7.ԼՍԵՑԻՆ.- Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ Արտակ Համլետի Հովհաննիսյանի «Հին արևելքի պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկը

հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ Արտակ Համլետի Հովհաննիսյանի «Հին արևելքի պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամներ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝

Վ. Գրիգորյան

Քարտուղար՝

Թ. Խաչատրյան